Cap. XVI. ՍՆՐԿԻՈՆԱՅ այս ՚ի պոնտացոց աշխարհէ անտի եղեալ էր, որդի եպիսկոպոսի: Եւ ապականեալ զկոյս մի, գնաց փախտական վասն մերժելոյ զնա յեկեղեցւոյ՝ իւրոյ իսկ հօրն: Եւ երթեալ ՚ի Հռովմ խնդրել ապաշխարութիւն յայնմ ժամանակին, և չհասեալ այնմ՝ զրգուեցաւ ընդդէմ հաւատոց: Եւ եղեալ երիս առաջս, ուսուցանէ զբարւոյ և զարդարոյ և զչարէ: Եւ զնոր կտակարանս օտարտի համարի ՚ի հնոյն. և յայնմանէ, որ ՚ի նմայն խօսէր, զյարութիւն մարմնոյ արհամարհէ: Եւ մկրտութիւն ոչ մի

Chrest. armen.

c

Քայն տայ, այլ և երիս յետ յանցանելոյ. և փոխանակ երա-  
խայից մեռելոց՝ այլոց ստիպէ առնուլ կնիք: Եւ այնչափ  
յանդգնեալ՝ մինչեւ կանանց հրամայէ մկրտութիւն տալ, զոր  
ոչ ոք իշխեաց յայլոց աղանդոցն առնել. ոչ կնիք կրկին և  
երեքկին տալ, և ոչ զկանայս առ քահանայս ունել:

Եւ և նմա իսկ ուստի իցէ քահանայութիւնն, որոյ ապա-  
կանեալ զկոյս՝ տարագիր եղել յեկեղեցւոյ յիւրմէ հօրէ, մին-  
չեւ ապաշխարութեան եւս հասանել ոչ եղել արժանի: Եւ  
յիրաւի չեղել արժանի, զի՝ ի պատգամս հոգւոյն սրբոյ իշխեաց  
ձեռն արկանել, զկէսն հատանել ընկենուլ իբրեւ զխոտան,  
և զկէսն ընտրել առնուլ իբրեւ զպիտոյս: Եւ զայն ոչ գիտ՛  
թէ յորժամ՝ ի մարմնոց մատն մի կտրիցէ առնուցու, զամե-  
նայն մարմնոյն իսկ վկայէ սակաւ ինչ մասնն կտրեալ: Եւ աւել  
եւս յանդիմանէ զնա կատարիչն օրինաց, որ ասէր՝ թէ ոչ եկի  
լուծանել զօրէնս և զմարգարէս, այլ ընուլ զնոսա. և Եւա-  
քեայն, որ ասէ թէ Վրիստոս է խաղաղութիւնն մեր, որ  
արար զերկոսին՝ ի մի: Արուն փառք յաւիտեանս յաւտենից.  
ամէն:

IV. ELISEI hist. de Vardano et bello Armeniorum  
lib. II. p. 41. sqq. ed. Ven. 828.

ՍՒՆՐՆԵՐՈՒՆՎԷՐՈՒԿ հրամանատար Երան և  
տաներան, շայոց մեծաց ողջոյն շատ:

Դուք զիտասջիք, ամենայն մարդ՝ որ ընակեալ է ՚ի ներ-  
քոյ երկնի, և ոչ ունի զօրէնս դեմի մազդէզն, նա խուլ է և  
կոյր, և դիւաց շարամանոյ խաբեալ: Վանդի մինչ չեւ  
էին երկինք և երկիր, Օրուան մեծն աստուած յաշտ առնէր

զհազար ամ, և ասէր. Թերեւս լինի իմ որդի Որմիզդ անուն, արասցէ զերկին և զերկիր: Եւ յգացաւ երկուս յորովայնի. մի վասն յաշտ առնելոյ, և զմեան եւս Թերեւսն ասելով: Իբրեւ գիտաց, եթէ երկու են յորովայնիս, Որ վաղ եկեացէ, ասէ, նմա տաց զԹագաւորութիւնս: Իսկ որ էր 'ի Թերա-հաւատութենէն յղացեալ, պատառեաց զորովայնն և ել 'ի դուրս: Եսէ ցնա Օրուանն: Ո՞վ ես դու: Եսէ. Որդին քոյ եմ Որմիզդ: Եսէ ցնա Օրուանն. Իմ որդին լուսաւոր է և անուհահոտ, դու խաւարային ես և չարասէր: Եւ իբրեւ կարի դառնապէս ելաց, ետ ցնա զԹագաւորութիւնն հա-զար ամ:

Իբրեւ ծնաւ զմեւս եւս որդի, անուանեաց զնա Որմիզդ-եհան զԹագաւորութիւնն յԱրհմնէ, և ետ ցՈրմիզդն. և ասէ ցնա. Յայժմ ես քեզ յաշտ արարի, արդ դու ինձ արա: Եւ Որմիզդ արար զերկինս և զերկիր. իսկ Արհմն ընդդէմ չար գործեաց: Եւ այստէս բարժանին արարածքս. հրեշտակք Որմիզդի են, իսկ դեւքն Արհմնոյն. և ամենայն բարիք՝ որ յերկնից և այսր լինին՝ Որմիզդի են, և ամենայն վնասք՝ որ անտի և այսր գործին՝ զայն Արհմն արար: Սոյնպէս յերկիրս որ ինչ բարի է զայն Որմիզդն արար, և որ ոչն է բարի զայն Արհմն արար. որպէս զմարդ Որմիզդ արար, և զախտս և զհիւանդութիւնս և զմահ Արհմն արար: Եւ ամենայն թշուա-ռութիւնք և պատահարք՝ որ լինին, և պատերազմունք դառ-նութեան՝ չարին մասին արարածք են: Իսկ յաջողութիւնք և տէրութիւնք և փառք և պատիւք և առողջութիւնք մար-մնոց, զեղեցկութիւնք դիմաց և ճարտարութիւնք բանից և երկայնակեցութիւնք ամաց, այդ 'ի բարւոյն առնուն զգոյա-ցութիւն. և ամենայն որ ոչ այդպէս է, 'ի նա չարին արարած խառնեալ է:

Եւ ամենայն մարդիկ մոլորեալ են, որ ասեն՝ եթէ զմահ

o\*

Մտուած արար, և չար և բարի 'ի նմանէ լինին մանաւանդ որպէս քրիստոնեայք ասեն, թէ Մտուած նախանձոտէ. վասն թող միոյ ուտելոյ 'ի ծառոյն Մտուած զմահարար, և զմարդըն արկ ընդ այնու պատուհասիւ: Բայդպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ Մտուած առ մարդիկ. զի որ զայս ասէ՝ նա խուլ է և կոյր և 'ի գիւաց Հարամանոյ խարեայ:

Իարձեալ մեւս եւս այլ մոլորութիւն ասեն. Մտուած, ասեն, որ զերկինս և զերկիր արար, եկն և 'ի կնոջէ ումեմեէ ծնաւ, որում անուն էր Սարիամ, և առն նորա Յովսէփ: Եւ զհետ այսպիսի մարդոյ մոլորեալ են բազումք: Եթէ աշխարհն Հոռոմոց առ յոյժ յիմարութեան տգիտաբար մոլորեալ են, և զըկեալ են 'ի կատարեալ դեմէս մերմէս յանձանց պարմայեն զմնասն իւրեանց. դուք եւս ընդէր զհետ նոցա մոլորութեանն ցնորիք: Եւ զոր օրէնս տէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք. մանաւանդ զի և առաջի Մտուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ:

Մի հաւատոյք առաջնորդացն ձերոց, զոր նաժրացիսդ անուանէք, քանզի յոյժ են խարերայք. զոր բանիւք ուսուցանեն, գործովք ոչ կարեն յանձն առնուլ: Միս ուտել ոչ ասեն մեղք, և ինքեանք ուտել ոչ կամին. կին առնել արժան է, բայց ինքեանք և հայել 'ի նա ոչ կամին. կարասի որ ժողովէ, ասեն, մեղք են յոյժ, բայց զաղքատութիւն առաւել քան զյոյժ գովեն. յարգեն զթշուառութիւն, և պարսաւեն զյաջողուածս. ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորութիւն յոյժ այպանեն. սիրեն զանշքութիւն հանդերձից, և յարգեն զանարգս քան զպատուականս. գովեն զմահ, և պարսաւեն զկեանս. անարգեն զծնունդս մարդոյ, և գովեն զանորդութիւն: Եւ եթէ լսէ ոք դոցա և 'ի կանայս ոչ մերձենան, աշխարհի վախճան վաղվաղակի հասանէ:

Այլ ես ոչ կամեցայ զամենայն ըստ մասանց ընդ գրով  
արկանել առ ձեզ. զի բազում այն ինչ է, զոր խօսին դոքս:  
Որ չարագոյն եւա է քան զոր գրեցաքդ, զՆստուած 'ի խաչ  
ելեալ 'ի մարդկանէ քարոզեն, և զնոյն մեռեալ և թաղեալ,  
և ապա յարուցեալ և վերացեալ յերկինս: Մէջաճեզէն իսկ  
արժան էր անդրէն դատաստան առնել վասն այդպիսի անար-  
ժան ուսմանց: Դեւք որ չարք են, ոչ ըմբռնին և տանջին 'ի  
մարդկանէ, թող թէ Նստուած արարիչ ամենայն արարածոց.  
զոր ձեզ ամօթ է ստել, և մեզ կարի անհաւատարի բանք:

Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարէք բան առ  
բան նամակիրդ պատասխանի, և կամ արիք 'ի դուռն եկայք,  
և յանդիման լերուք մեծի հրապարակին:

---

V. MOSIS CHORENENSIS hist. Armeniorum lib. I.  
Cap. 10.

Յաղագս ապստամբութեանն Հայկայ.

Այս, ասէ, (քի Մար Աբաս կատինայ) Հայկ գեղապատ-  
շած և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ.  
սա 'ի մէջ սկայիցն քաջ և երեւելի լեալ, ընդդիմակաց ա-  
մենեցուն, որք ամբռնային զձեռն՝ մեպետել 'ի վերայ ամե-  
նայն սկայիցն և դիւցազանց: Սա խորխաացեալ ամբարձ  
զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Ռէլայ, 'ի տարածանել  
ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի 'ի մէջ բազ-  
մակոյտ սկայիցն, անհուն խօլաց և ուժաւորաց: Վանզի  
անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր սուր 'ի կող ընկերի իւրոյ  
ձգելով, ջանային տիրել 'ի վերայ միմեանց. ուր պատահունք  
'ի դէպ ելանէին Ռէլայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր:



Որում ոչ կամեցեալ Հայկայ՝ հնազանդ լինել Ռէլայ, յետ  
ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ ՚ի Ռաբելոնի, չու արարեալ  
գնայ յերկիրն Արարադայ, որ է քի կողմանս հիւսիսոյ, հան-  
դերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք,  
արամբք զօրաւորօք՝ Թուով իբրեւ երեքհարեւր, և այլովք  
ընդոճնօք, և եկօք յարեցելովք ՚ինա, և բոլոր աղելիւ : Աբ-  
թեալ բնակէ ՚ի լեռնոտին միում՝ ՚ի դաշտավայրի, յորում սա-  
կաւք ՚ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն գադարեալ բնա-  
կէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ տուն  
բնակութեան կալուածոց, և տոյ ՚ի ժառանգութիւն Ադա-  
մեայ որդւոյ Արմանեկայ : Այս արդարացուցանէ զանգիր  
հին ասացեալ զրոյցս :

Աւ ինքն խաղայ, ասէ, այլով աղելիւն ընդ արեւմուտս  
հիւսիսոյ, գայ բնակէ ՚ի բարձրաւանդակ դաշտի միում. և ա-  
նուանէ զանուն լեռնադաշտակին Հարք. այս ինքն, աստէն  
բնակեալքս՝ ազգի տանն Թորգոմայ : Շ ինէ և գիւղ մի, և ա-  
նուանէ յիւր անուն Հայկաշէն : Աիշի և աստանօր պատմու-  
թիւնս. հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնա-  
նստիւ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք՝  
ինքնակամ հնազանդել դիւցազինն : Արդարացուցանէ և  
այս զասացեալ զրոյցս անգիրս :

---

VI. FAUSI BYZANTINI hist. Armeniorum lib. V.  
cap. 7.

Յադագս մահուան Արշակայ Թագաւորին Հայոց, Թէ  
գեարդ մեռաւ յերկիրն խուժաստանի յԱնդամբշն բերդին ինք  
ինքեամբ ձեռօք, և ՚ի յստամատն էր պատճառք մահուն :

Եւ յայնմ ժամանակի դեռ տակաւին եւս կայր կենդանի Երչակ արքայ չայոց յերկրին ի շէսանութեն թագաւորութեն Պարսից ՚ի կողմանս խուժաստանի յԱնդմըն բերդին. այս ինքն որ անուն Ենյուշն բերդն կոչեն: Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ չայս. զի արշակունին թագաւորն Վուշանաց, որ նստէր ՚ի Բազն քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանականին Շապհու և թագաւորին Պարսից: Եւ Շապուհ թագաւորն զամ զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զորս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն չայոց զամ պրեձի գումարեալ խաղացոյց ընդ ինքեան. և զներքինին անգամ թագաւորին չայոց Երչակայ տանէր ընդ ինքեան ՚ի գործ պատերազմին:

Եւ էր ներքինի մի չայոց թագաւորին Երչակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի ի շէսանութե և մեծի պատուի, և անուն Գրաստամատն: Իսկ իբրեւ եղև պատերազմ ընդ թագաւորին Վուշանաց և ընդ թագաւորին Պարսից, չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Վուշանաց, և զբազումսն կոտորեցին ՚ի զօրացն Պարսից զօրքն Վուշանաց, և զբազումսն ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին: Իսկ Գրաստամատն ներքինին, որ յամն Տիրանայ թագաւորին չայոց և Երչակայ որդւոյ նորա թագաւորին չայոց լեալ էր ի շէսան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Ենգեղ բերդին, և ամ բերդացն արքունի՝ որ ՚ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Նոփաց ՚ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձնորա ի վեր քան զամ նախարարացն: Եւ քանզի այս գործակալութի և մարդպետութի, որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր ՚ի բնէ ժամանակաց ՚ի թագաւորութեն արշակունոյ, և զայս Գրաստամատն ներքինի զի շէսանն զԵնգեղ տանն գե-

րեալ տարեալ էր յերկիրն Պարսից 'ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց :

Եւ այս Գրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վաթարեցին Բուշանքն զՇ ապուհ արքայն Պարսից : Եւ Գրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կուուաւ ևս 'ի վերայ Շ ապհոյ արքայի, և ապրեցոյց զնա 'ի մահուանէ. և բազումն 'ի Բուշանաց անտի կոտորեաց, և զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեալ : Եւ զՇ ապուհ թագաւորն Պարսից փրկէր 'ի նեղութէն պատերազմին թշնամեաց անտի, ուր արգելին զնա 'ի խուռն պատերազմին 'ի զօրաց անտի : Իսկ իբրև եղև յորժամ զարձաւ Շ ապուհ թագաւորն Պարսից յերկիրն Մսորեստանի, և մեծ շնորհակալութի առնէր ներքինոյն Գրաստամատայն վաստակոցն, և ասէր ցնա Շ ապուհ թագաւորն Պարսից. 'ինդրեա՛ գու ինչ յինէն. զինջ և ինդրեացես, տաց քեզ և ոչ արգելցց : Եւ ասէ Գրաստամատ ցթագաւորն. Ինձ 'ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զքնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց : Եւ առ մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա 'ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ազուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս, և զնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ձիշո : Եւ ասէ թագաւորն Շ ապուհ. Խիստ են ինդրուածքդ, զոր ինդրեցիրդ. զի յառուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորութիս Պարսից կաննեալ է, և բերզն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ 'ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց՝ յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, թող թէ զնա զայր թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն.

քան մինչ աշխատ արարեր զմեզ, և դու աւաղիկ զանձն 'ի մահ եղիւր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեա Մրեաց 'ի սկզբանէ: Բայց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ երթ' տուեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս: Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք Մրեաց թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց: /

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արքունի մատանեաւն, զի գնացեալ երթիցէ նա 'ի բերդն յԱնդմրշն, և զհարդ և կամք իցէ նորա, զոր օրինակ և խնդրեացն՝ արասցէ կապելոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր 'ի Հայս: Եւ չոգաւ Դրաստամատն հանդերձ փշտիպանաւն և հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն, և ետես զտէրն բնակ, և արձակեաց զԱրշակ 'ի կապանացն երկաթեաց 'ի ձեռակապացն և յոտիցն երկաթոց և յանրոց պարանոցէն շքթայիցն սարեացն. և լուաց զգլուխ նորա, և լոգացոյց զանձն նորա: Եւ ագոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս և բազմեցոյց զնա. և եզ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց և եջ առաջի նորա գինի որպէս օրէն էր թագաւորացն. սթափեաց զնա, և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա գուսանօք:

Եւ 'ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եղին առաջի նորա միրզ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եղին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զհարդ ե կամեսցի: Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, և գինին եկն զակամք նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. Ս'այ ինձ Արշակայ. այսպէս և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ

իս : Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր 'ի ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար 'ի սրտի իւրում : և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն 'ի նմին ժամուն մինչ դեռ կայր 'ի բազմականին : Իսկ յորժամ զայն ետես 'Իրաստամատն, յարձակեցաւ եհան 'ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ. և նա 'ի նմին ժամուն յայնմ :

IOANNIS MANDACUNENSIS sermones. ed. Ven.  
836. p. 209. sq. de amore.

Աստուած սէր է, ասէ որդին որոտման սիրելի աշակերտն Քնի Յովհաննէս. և որ կայ 'ի սէրն յանձն բնակէ, և անձ 'ի նմա : Ես արդ եղբարք, լուարուք և 'ի միտ առէք զճառս սիրոյ : Օ՛ի ամ որ սիրէ զանձ, սիրէ նա և զեղբայր իւր. զի սէրն այլ սիրով եղբօրն երևի : Օ՛ի թէ զեղբայրն զոր տեսանէ ոչ սիրէ, զանձ զոր ոչն տեսանէ զհարգ կարիցէ. սիրել : Այսուիկ ճանաչեմք եթէ սիրեմք զանձ, յորժամ սիրեմք զեղբայրն մեր ըստ հոգւոյն սիրոյ և ոչ ըստ մարմնոյ : Օ՛ի այլ է սէր հոգւոյն և այլ մարմնոյն. զոր յառաջ գնացեալ ասասցուք յիւրում տեղւոջն : Բայց արդ ամ որ սիրէ ճանաչի յայ, և ինքն ճանաչէ զանձ. և ամ որ ոչ սիրէ զեղբայր իւր ցաւակցաբար, օտար է յայ, ե զշնորհս անձային ոչ կարէ ընդունել : Ամենայն որ սիրէ զեղբայր իւր 'ի սուրբ սրտէ, բնակարան լինի այ, և անձ 'ի նմա բնակէ : Օ՛ի ինքն տէրն սիրեաց զմեզ և առաքեաց զհոգին ճշմարտութե բնակել 'ի մեզ : Օ՛ի իմանալի հոգիս մեր ընդ անիմանալի հոգւոյն այ սիրով կապակցի. և որպէս նա սիրեաց զմեզ, նոյնպէս և 'ի մէնջ կամի սիրել զմեմանս :

Տես թէ որչափ համարձակութի ունի սէրն առ անձ, որ-

պէս թէ նման այ առնէ զմարդն: Օ ի ան սիրողն իւրով նման մարդկան եղև, և եցոյց թէ մարդիկ իւրեանց սիրողն նման այ լինելոց են: Օ ի ան այնչափ սիրեաց զաշխարհս, մինչև զՈրդին իւր միածին առաքեաց 'ի փրկութի աշխարհի. եթէ մեք սիրեսցուք զմեանս որպէս և սիրեաց ան զմեզ, ոչ ինչ է չար որ խափանէ զսէրն մեր: Ամենայն որ սիրէ, յայտնի է առաջի մարդկան և համարձակ առաջի այ. զի երկիւղ 'ի մեզաց մահու ոչ ունի, այլ սիրողն այ զինեալ կայ, և անահայտ երկիւղական վտանգից: Ուր սէր է, անդ երկիւղ ոչ է. որպէս և Յոհաննէս ասէ. «Երկիւղ ոչ գոյ 'ի սէրն, այլ սէր կատարեալ 'ի բաց մերժէ զերկիւղ»: Օ ի երկիւղ ընդ տանջանօք է, և սէր 'ի համարձակուի. և զի երկիւղ հալածի 'ի սիրոյ: Եւ ուր սէր ոչ է, անդ է երկիւղ դատաստանին, և ահ կորստեան յաւուր մեծի ահեղ ատենին: Իսկ սէր աներկիւղ առնէ զմարդ յամ տանջանաց: Այլ զայն ասեմ, որ ամենևին հեռի է յերկբայութենէ: Օ ի երկբայութի և սէր 'ի միասին ոչ բնակէ. և գիտելի է զի սէրն ոչ միայն 'ի կեանսն յաւիտենականս պողաբերէ զպտուղ խաղաղուէ իւրոյ, այլ և յաշխարհիս յայսմիկ զամթշնամութի 'ի բաց հալածէ զնախտնձ և զատելուի, զխակալուի և զչարակնուի, զչարախօսուի և զհայհոյուի, զտրտունջ և զբամբասանս, զպարտուի և զամբարհաւածութի, և մանաւանդ զմայրն ան չարեաց զարծաթսիրուի և զագահուի:

Եւդ որ զսէրն ունի, յայս ամ չարեացս 'ի բաց հեռանայ, և յերկնային անքոյթ խաղաղական նաւահանգիստն ժամանէ յամենևին բարին: Օ ինչ խաղաղական քան զսէրն՝ ազատ լինել յամ խռովուի և զանձային հաճոյսն կատարել: Այլն բանալի է արքայուէ երկնից և ճանապարհ կենացն յաւիտենից: Այլն զմարդիկ որդիս այ առնէ և երկնից արքայուէ ժառանգորդ: Այլն զապականացու բնութիւնս անա-

a\*

պական գործէ, զմահականացուս յանմահութեանս գերա-  
 փոխէ: Սէրն զերկրայինս երկնային տունէ, և զհողերէնս  
 հրեղէն կազմէ: Եւ արդ ո՛վ կարէ պատմել զանչափ  
 մեծութի սիրոյն, զի անճառ և անպատում է: Բստ որում և  
 անեղ բնութիւն մեծութեան տնքններէ է, այսպէս և բնութիւն  
 սիրոյն: Եւ որպէս մեծ անբաւ է, քայց յամենեսինն մերձ է,  
 և բնակեալ է ՚ի հեզս և ՚ի խոնարհս և յայնոսիկ՝ որ դողան ՚ի  
 բանից նորա, այնպէս և սէրն յամենեսեան մերձ է, որ կամն  
 զնա, և ինքն եկեալ բնակեսցէ ՚ի խնդրողս իւր: Վրանզի  
 սէրն սիրէ զսիրելիս իւր, և աստէ ոչ զատելիս իւր: Ար խըն-  
 դրեն զնա, մերձ է ՚ի նոսա մեծապէս. զի մեծ սէր է և կամեցող  
 սիրոյ ՚ի սուրբ սրտէ և յանկեղծաւոր հաւատոց:

---

Gregorii Narekensis Commentarius in Canticum Can-  
 ticorum. Prooemium p. 389. sqq. ed. Ven. 1827.

Հրամանք մեծասէր Թագաւորութեդ, ո՛վ տէր արքայ,  
 բուն և աւելի էր քան զկար մեր. զի այդպիսի խնդիր, մեկ-  
 նել զերգ երգոց՝ այնոցիկ էր, որ ըստ Սողոմոնին է հոգւով:  
 Օ ի եթէ նիւսացին Գրիգոր, որ կատարեալ վարդապետ էր  
 և հոգիաբնակ, ՚ի բուն կատարմանէ մեկնութե՛ս այսմ գրոցս  
 վերջացեալ գտանի, որչափ ևս առաւել ես, որ ամենայնիւ  
 տգէտ եմ և ունայն ՚ի հոգւոյն շնորհաց, ո՛չ կարացից հետեւել  
 մտացն ասացելոց ՚ի սողոմոնեան հոգւոյն: Մանաւանդ զի  
 չէ՛ փոքր դատապարտութի և պատիժք՝ զբանս սրբոց գրոց  
 օտար մեկնութե՛ք քաղաւաղեալ՝ վասն ոչ տգէտ երևելոյ, և  
 փառամոլ հպարտութե՛ր՝ զոչէսն իբրև զճշմարիտ ցուցանել

Բայց զի հրամանն ունիմք հնազանդ լինել թագաւորաց հրամանաց, յանդգնիմասել զիմ տկար մտացս հասողութիւն. յուսացեալ ՚ի հոգին սբ, զնորայն կատարելով հրամանն, որ ասաց, թէ հպատակ կացէք թագաւորաց :

Արդ նախ առաջին՝ խնդացի ընդ այս, որ այսպիսի միտս երևեցուցեր առ ՚ի քննել զգիրս, և հոգ տանել ուսմանց, որ է գուշակ երկիրդ տն, և օտարանալոյ ՚ի պիղծ հոգւոց և ՚ի վայրապար քննութեց և ՚ի մեղսասէր բարուց՝ և այնմ երանութեց մօտաւորիլ, որ մարգարէն ասէ, թէ “Նբանեալ է այր՝ որ ոչ գնաց ՚ի խորհուրդս ամբարշտաց», և որ զկնի գայ: Ար և սակաւ ինչ յառաջ երթեալ՝ ասէ, “Այլ յօրէնս տն խորհեսցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի»: Ապա զհատուցումն խորհելոյն զօրէնս տն ՚ի վերայ բերեալ ասէ, թէ “Նղիցի նա որպէս ծառ՝ որ տնկեալ է ՚ի գնացս ջուրց»: Օ ՚ի որպէս ծառ՝ որ տնկեալ է ՚ի գնացս ջուրց, անթարշամ է, նոյնպէս և որ զպատուիրանս տոյ քննէ, և այնմ հոգ տանի ՚ի տուէ և ՚ի գիշերի, այնպէս անթարշամ մնայ յայսմ ՚ի կեանս. և զամենայն զոր ինչ առնէ, յաջողէ նմա անձ: Արպէս Դաւթին իսկ յաջողեաց. զի այր թագաւոր էր, և այնչափ մեծ թագաւորն զպատերազմաց և զամենայն պիտոյից մարմնոյ հոգս առ ոտն հարեալ, զայսն և եթ խորհէր. վասն որոյ անպարտելի մնաց ՚ի թշնամեաց: Նոյնպէս և ՚ի Սողոմոնն տեսէք, թէ քանի տիրեցերակալ թագաւոր էր. բայց հանապազորդեան հոգք այն էր նորա, զոր յընթեռնուլդ էք. և այլ ևս այնչափ գրեան, զոր և աշխարհս չէր բաւական ՚ի բառնալ՝ եթէ մնացեալ էին դրեանն. բայց զի չէր աշխարհ արժանի, և չպիտէր որ ուսանէին մարդիկ, զայնպիսի անչափ գիտութիւն եբարձ անձ յերկրէ. զի զամենայն ինչ ՚ի գիտութի էր բերեալ, որ ինչ արարեալք էին այ ՚ի վերայ երկրի. և եթէ չէր գլորեալ, այլ ևս մեծաց շնորհաց էր հասեալ: Արդ ընդ այնպիսիսն պարտ



է նախանձել թագաւորաց, և անյազաբար ուսանել զօրէնս  
տն: Բայց այժմ կացցէ այդ, զի 'ի սկիզբն մեկնութեան  
զրոցս մխեսցուք:

Արդ նախ զայս արժան է ասել, թէ զի՛նչ մեկնի Արգ  
երգոց. և այսու զանբաւ պատուականութիւն նորա ուսանել:  
Արգ երգոցդ է օրհնութի՛ր օրհնութեց: Արպէս և մեք սովոր  
եմք խորանին սրբութե՛ր, սւր սեղանն սբ կայանայ, սրբութիւնք  
սրբութեանց կոչել. որպէս ասէ իսկ առաքեալ: Այսինքն՝  
եթէ եկեղեցին է սրբութի՛ր, և խորանն սբ՝ կրկին սուրբ և  
առաւել սբ: Աոյնպէս և նա ամենայն երգոց օրհնութեանց  
գեր 'ի վերոյ է. որպէս և 'ի նորումս աւետարանն՝ սբ և պա-  
տուական կոչի քան զայլ գիրս. նոյնպէս և նա քան զհինսն:  
Յաղագս որոյ իմանալի է՝ թէ ձայնիւ երգէին 'ի տաճարին,  
առաւել ևս յանգութե՛ր, և մարգարէական հոգւով քան զդաւ-  
թեան սաղմոսն. զի անձառ է խորհուրդն՝ որ 'ի յայն սարսա-  
փելի բանն ծածկեալ է: Եւ ոչ կարէ ոք 'ի մարմնեղինաց  
իմանալ, բայց եթէ որք ըստ Պաւղոսին են հոգւով, որ յեր-  
րորդ երկինս ել, և զանձառ բանն լուաւ. զոր ոչ էր կար  
մարդոյ խօսել: Այնն զի ոչ տեէ լսելիքս այս այն խորհրդ-  
դոցն լսելութեան, որպէս և ոչ աչքս այս տեսութեն այն:

Արդ զանձառելին կամեցեալ պատմել Սողոմոնի՛ 'ի  
մարմնաւոր իրս առակեաց. այսինքն 'ի փեսայ և 'ի հարսն,  
յեղբորորդի և յօրիորդ, 'ի դուստր և յաղանի, 'ի ստինս և 'ի  
տաշնս, և յեւղ թափեալ, 'ի խնձոր, յայծեամն, 'ի Սողոմոնն,  
'ի թագաւոր, 'ի քաղաքն Արուսաղէմ, 'ի պարտեզ, և որ այս-  
պիսիք ցանկալի աշաց հայելոյ, և լսելեաց ակորժելիք, և  
մտաց փափաքելիք: Օչ 'ի որպէս ծնողք տղայոց՝ զպատուա-  
կան իրս 'ի բարեստեսակ ամանի ծածկին, զի նոցա արտաքոյ  
տեսեալն ցանկալի թուին քան զոր 'ի ներքս եղեալ գանձն,  
զի այնու յորդորեսցին և զգուշութե՛ր պահպանութե՛ր որ 'ի

ներքս: 'Նա և եւղ անոյշ և մեծագնի, որպէս նարգոսն՝ որ սա իսկ յիշէ, ամանիւ ամփոփի այլ և հոտ անոյշ ո՛չ ՚ի բացի մարթի մնալ, որպէս և տօրն ՚ի սրբում՝ աւետարանին ասէ, թէ "Ս՛ի արկանէք զմարգարիտ ձեր առաջի խողաց,՝ այսինքն, թէ մի տայք տկար լսելեաց զանճառելիսն. նոյն հոգի ուսոյց Սողոմոնի՝ մի յայտնապէս սփռել զորս ետես հոգւով լուսոյն. և մի ամենևին թագուցանել զխորհուրդ եկեղեցւոյ, և զփրկութի, և զԲ՛սի մարմնանալն, և զամենայն ինչ զոր կրեաց վասն մարդկան սիրոյ, և զմահն, և զյարութին, և զմիւսանգամ գալուստն, և զոր ինչ անդ կայ պահի պարգևք սրբոց՝ անիմանալիք, և զտուփումն սիրոյ սրբոցն որ առ Վ՛ն, որ արեամբ և մահու չափ կրեցին յանձինս, սիրելով զԲ՛ս, որպէս և նա զմեզ. որ վասն զիւր զանբաւ սէրն յայտ ածելոյ մեզ՝ հարկեցաւ մարմին զգեհնուլ, և դարձեալ զ՛նք արիւնն հեղուլ վասն մեր: Ար կարողն էր իշխանաբար փրկել զմեզ ՚ի սատանայական բռնութեց իբրև զմծ, զայն իրաւամբք արար, և զնա բռնութի կապեաց: Նա և զայն հանդարտութի գործեաց, և ո՛չ տէրութի: Օ՛ ի իրաւամբք փրկեսցի գերութի նորա և ողորմութի, որ է այսինքն զմահն զոր ըստ իրաւանց դատեաց զմեզ ՚ի հող դառնալ վասն անարգելոյ զպատուիրանն՝ որ վասն պտղոյն չուտելոյ, և զարդար դատն՝ առանց իրաւանց ո՛չ եբարձ՝ որ ունէին իշխանութի: Այլ ինքն զադամեան զգեցաւ մարմին, և զմահն նորա յինքն առ, և իրաւամբք փրկեաց: Նա և ընդ իրաւունսն զողորմութի խառնեաց, և ընդ ողորմութիւնն՝ զիրաւունսն. և այսու ամենայնիւ եցոյց զանպատմելի սէրն՝ որ առ մեզ: Օ՛ այս ամենայն պատմէ Նրգ երգոցն, և զեկեղեցւոյ պայծառազարդութի խաչին և սեղանովն, մարմնով և արեամբն տն, սք աւազանաւ և իւղովն սրբով, հին և նոր կտակարանօք, առաքելովք և մարգարէիւք և վարդապետօք, քահանայականօք և ճրգ-

նաւորականօք, կուսանօք և մարտիրոսօք, քրիստոնէոյ թա-  
գաւորօք, և բովանդակ անբիժ ժողովրդօք, որ յեկեղեցւոյ  
էր անկեցոց, և զայնպիսի պարզեան, և զանքննելի, և որ այլն  
ևս սոյնպիսիք անձառ պարզեք, որ առտիւտար բանիւս եցցց  
մեզ: Այլ և նա ճշմարտապէս ոչ ծանեաւ զբովանդակն, և  
ոչ ծանուցանել մարթաց. և ոչ զոր ինքն գիտաց, մեզ յայտ-  
նի յայտ երեք, այլ առակաւ:

Այս եթէ հարցանէ ոք, թէ զեւորդ ՚ի հարան և ՚ի փե-  
սայ առակեաց. և զեւորդ մարթի զայ խորհուրդն մարմնաւոր  
ցանկութիւն նշանակել, և զանչափ սէրն այ՛ տիտի սիրով օրի-  
նակաւ ՚ի յայտ բերել: Ատի՛ արժան է զցանկասէր բարս  
մեր աւաղել. որ այնչափ օտարացեալ եմք յայ խորհրդոցն, որ  
այս անսանական ցանկութիւն հարկեցաւ հոգին սբ ՚ի ձեռն  
Սողոմոնի պատմել մեզ զանտանելիսն: Այսպիսի իրաց օ-  
ղագաւ և երանելի վարդապետն Թեոփիլոսաց (Յոհան վարի-  
րանիւ): Թէ այնպիսի սրբական վարս պիտոյանայր մեզ ստա-  
նալ, որ գիրս ոչ պիտոյ էր. որպէս Ադրիան, և Աբրահամու  
և Նորին որդւոց և թոռանց. որպէս Յովլեայն, և Սովսէսին,  
և առաքելոցն. որ փոխանակ գրոյ ՚ի սիրտս նոցա ընակէր, և  
ուսուցանէր, և ՚ի տախտակս սրտին գրէր, և ոչ ՚ի գիրս: Արդ  
նոյնպէս պարտ էր լուսաւոր և հրեշտակային սիրտ ստանալ,  
որ ոչ պիտոյանայր մեզ այնպիսի առակ ցուցակի՛ ՚ի հարան և  
՚ի փեսայ կերպարանել զխորհուրդս Վնի և եկեղեցւոյ, և  
որ յերկինս հն անիմանալի բարութիւնքն: Արդ քանզի զայն-  
պիսի պատիւ կորուսաք, և զայնպիսի շաչ կուրացուցաք, ո՛ն  
առեալ յերկրորդն զիմացուք, և ՚ի ձեռն մարմնաւորացս  
տեսցուք զհոգևորսն. որպէս և պատմէ Սողոմոն՝ ընկալեալ  
զշնորհս հոգւոյն սբբոյ: Այս և սուրբ ամուսնութիւն և սէր  
փեսայի ընդ հարսին և հարսին ընդ փեսայի, որ ազատ լինի ՚ի  
պիղծ խառնից, չէ՛ ստար ՚ի հոգւոյն շնորհաց, որով և խորհուրդն

ի Քն և յեկեղեցի աւարտի, ըստ առաքելոյն, թէ «Խորհուրդս այս մեծ է. բայց ես ասեմ՝ ի Քն և յեկեղեցի», վկայելով Սողովմննի բանիցն: Արդ որ զնք ամուսնուի պղծէ պեղծ խառնակութիւնք և չար գործովք, զեկեղեցւոյ՝ խորհուրդ պղծէ, և զՔն անարգէ, որ այսմ օրինակն է:

Բայց մեք դեռ զառաջի եղեալ խորհուրդս մեկնեսցուք, և ցուցցուք, թէ որչափ սէր ունի անձ առ մարդիկ. այնպէս, որպէս փեսայ ընդ հարսին. որպէս ասէ Եսայի, թէ «Որպէս ուրախ լինի փեսայ առ հարսին, այնպէս ուրախ լինի տէր ի քեզ», : Օ, որ և Գաւիթ իսկ ասէ յողբսն (Հովնաթանու, թէ «Բազում ցաւ է սէր քո ինձ քան զսէր կանանց», : Արդ չի՞ք յերկրի պատուականադոյն և առաւել քան զսէր առն և կնոջ: Ապա եթէ ոմանց ոչ շատ կարծի և կարևոր, յաղագս այնր չթուի զի ոչ սրբութիւն լինի եկեալ յամուսնութիւնն. և ոչ սրբութիւն իցէ պահեալ զկուսութիւնն, այլ անառակ պղծութեամբքն իւրովք փախուցեալ իցէ յինքննէ զշնորհս հոգւոյն: Իսկ որ անբիծ և անարատ դայ ՚ի սր յամուսնութիւն, և անձառ սիրով սրբով հոգւոյն սրբ իցեն միաւորեալ ընդ միմեանս, այն օրհնութիւնն օրհնին, որով Ադամն և Եւայն օրհնեալ միաւորեցան: 'Նա՛ որ այսպիսի սիրով և օրհնութիւն լինին միաւորեալ, ՚ի վերայ իրերաց արեամբ չափ մեռանին: 'Նա ևս և վասն ընտանեաց սիրոյ բազումք ՚ի Քնէ անկան և ուրացան ՚ի հալածանաց ժամանակսն: Այլ և Ադամ ևս ՚ի դրախտէն և ՚ի լուսեղէն փառացն՝ յաղագս կնոջն սիրոյ մերժեցաւ, և արտաքս անկաւ. և ոչ վասն անձ լինելոյ, այլ ՚ի նորա սիրոյն ծանր համարեցաւ քակել: Որ զիտէր ճշմարտապէս՝ թէ պատժելոց էր ինքն յայ. զի ոչ էր անգէտ, այլ լի մարգարէական հոգւով. և զի դեռ չէր ևս՝ ՚ի շնորհաց հոգւոյն անկեալ. վասն զի չէր անցեալ զպատուիրանան: 'Նա և յետ ուտելոյն զպատուղն ոչ ՚ի սպառ կորոյս զհոգին. այլ

Chrest. armen.

e

որպէս մինչ 'ի դրախտին էր, հոգւով սրբով ժանեաւ զամենայն կենդանեաց զբարս, և յածելն այ զնօսա առ Ադամ՝ բառ իւրաքանչիւր բարուց և բնութեց կարգեաց զմի մի անուանս նոցա: Այլ 'ի ննջելն իւրում յորում ստեղծաւ Աւայ, և յածել զնա առ նա՝ մարգարէութիւն ասաց, թէ «Այս այժմ ոսկր յոսկերաց իմոց», և զորդէ ծնութեան աճուսն որ 'ի կնոջէն, և թողուլ ըզհայր և զմայր, և երթալ զհետ կնոջ, և լինել մարմին մի: Այս և յետ ուտելոյն 'ի պողոյն՝ գիտաց մարգարէութիւն զփրկութիւնն մեր՝ զոր 'ի ձեռն կնոջն էր լինելոց, այսինքն 'ի ձեռն սր անձանին. վասն որոյ և կեանս կոչեաց զկինն. ապա թէ ոչ այդպէս, զհարդ կոչէր զնա կեանս, որ ամենայն ծնողոց Ադամայ՝ մահու պատճառն եղև: Այս և որպէս ասէ սր Աւսաւորիչն, թէ «Օ այս ասելով զամենայն որ մինչ 'ի կառարած գործք լինելոց էր յերկրի, և 'ի ձեռն Վսի զփրկութիւնն՝ գիտաց նա», Արդ եթէ մինչ 'ի փառաց անտի անկեալ էր, զմարգարէութե ունէր հոգի, իրջափ ևս առաւել մինչդեռ 'ի փառան էր. այո՛ և առաւել ևս ունէր: Արդ յայտ իսկ է, որպէս առաքեալ ասէ, թէ Ադամ ոչ պատրեցաւ, յօձին սուտ խոստումն՝ որ սատանայիւ, այլ կինն պատրեցաւ և յանցեաւ. և Ադամ յաղագս ոչ բաժանելոյ 'ի կնոջէն եկեր զպտուղն և սիրելոյ զնա, այլ ոչ վասն անձանալոյ՝ որպէս կինն: Այս և այժմ իսկ յաղագս սիրելոյ զկանայս՝ մեծարեն արք զկանանց խրատս և զչար կամս նոցա կարի յոյժ գիտեն, թէ չէ պատշաճ, այլ 'ի սիրոյն հարկին առնել: Արդ զայս գիտացեալ Սողոմոնի՝ կարևոր սէր 'ի մարդումս քան զամենայն սէր, և առականց 'ի Վսի սէր և յեկեղեցւոյ առ միմեանս: Այլ ոչ եթէ այսու միայն կշտի սէրն այ. զի որչափ ընդ ան և ընդ մարդիկ է առաւելուի, նոյնչափ սիրոյն գերազանցութիւն քան զամուսնութե: Այս որ զգիրքս զայս ընթեռնու, պէաս ունի մաքրել և զխորհուրդս յամե-

նայն մարմնաւոր ամուսնական մտածութեց, և պպա մեիլ  
'ի լսելուի: Օ՛ի պյս գիրքս լեառն է Քորէր, ուր ան  
ընկեաց, և որպէս անգ յորժամ գազան մերձենայր 'ի  
լեառն, քարկած լինէր, նոյնպէս և որ գազանաբարոյ մտօք  
մերձենայ յերեւելի բանս գրոցս այսորիկ, զնոյն կրէ զկիրս:  
Վ անն որոյ արտաքոյ ամենայն խորհրդոց մարմնեղինաց պար-  
տիւք լինել, խնչով զաչս մարմնոյ, և բանալ զհոգւոյն. զի  
կարասցուք նման Ս'ովսեփի յանձարնակ յայս ելանել իմա-  
նակ լեառն և զ'ի սմա անձային խորոցն զծածուկս ըստ կարի  
յայտ ածել: Արում առաջնորդ եղիցի հոգին ս'բ, յաւելլով 'ի  
մեզ լեզու ասելոյ, և լսողացք միսս լսելոյ:

---

р. 399. 84. **ՍՈՎՈՍՈՆՆՆ** խաղաղուի Թարգմանի,  
որով առակէ զՔՄ. զինա է խաղաղուի մեր, որպէս ասէ առա-  
քեալ: Երդ քանզի ծնաք նոր ծնունդ, ազաչեմք զծնօղն՝  
մտրական սիրտօն համբուրել զմեզ, մերձեցուցանել զբերանն  
անձային. զի 'ի համբուրելն նորա զմեզ՝ արթոցուք յայնմ բերա-  
նոյ զայն՝ որ ինքն ամենան բ բերանն ասաց. «Թէ ոք ծարակի  
իցէ, եկեացէ առ իս, և արթցէ»,; Յազապս այնորիկ ասէ, Թէ  
«Համբուրեսցէ զիս 'ի համբուրից բերանոյ իւրոյ»,; Նա  
և անառակ որդին գողով մեք, համբուրիմք յերկնաւոր հօրէն,  
ըստ ասելոյ առակին յաւետարանն: Երդ զսէրն՝ զոր սիրեաց  
զմեզ, առաւելուլ ազաչեմք՝ համբուրին առակաւ:

«Օ՛ի բարի են ստինք քո քան զգինի»,; Պատուիրանք՝ որ  
ճրճին 'ի հոգւոյն 'ի ստեանց գրոց, բարի են քան զգինի, ըստ  
մարգարէին ասելոյ, Թէ «Բարի են ինձ ամենայն բանք բերա-  
նոյ քո քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ»: Օ՛ի կաթն որ 'ի

ստենէ բղիտ, կենդանութիւն է պատճառ. իսկ գինին՝ միայն զօրութիւն:

“Եւ հոռ իւղոց քոց քան զամենայն խոունկս անուշահոտութիւն”, Եւսպէս առաքինութիւնք և բարի գործք՝ որ յածութեան իւղոյն բուրնն. այսինքն զոր ուսուցանէ հոգին սք՝ որոց մերձենան և հոտոտին ՚ի նա:

“Եւ լ թափեալ է անուն քո”, Եւ զի որ թափեալ է յամանէ, ոնզնին է, և միայն ամանին ճանաչի լեալ ՚ի նմա իւղոյն. այսպէս անութենն բնութի անզնին և անիմանալի և անտեսանելի է, իբրև զեւղն թափեալ: Եւ զոգիս արդարոց և տղայացելոց ՚ի մեղաց՝ անուշահոտէ, որպէս և զամանն՝ եւզն պատուական: Եւ զի թէ իբրև թափեալ եւ լ է անութենն անուն և գիտուեն ՚ի մարդկանէ անհասողութի, նա և ՚ի կատարեալ սրբոց, և ոչ միայն ՚ի սրբոց, այլ և ՚ի բովանդակ յերկնայնոցն. սակայն մեր բնութիս միութիւնք ՚ի սք կուսէն՝ որչափ մարթ էր տեսանել զեւղն, տեսաք: Օ, որ և ինքն տր ասաց ցկոյրն, իբրև եհարց եթէ “Ի ու հաւատամս յորդի նյ”, և նա պատասխանեաց, թէ “ո է տր”, և տրն ասաց, “և տեսեր զնա և որ խօսիդ ընդ քեզ, նա է”: Օ, մարմինն անճացեալ տեսանելով զինքն զեւղն անտես ասաց տեսանել:

“Վ ասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ”, Օրիորդս՝ զայնոսիկ կոչէ, որք ՚ի մեղաց տղայացան. նա և զհրեշտակս ևս:

# GLOSSARIUM.

Notae compendiariae, quae hîc occurrunt, explicatione haud egent. ccap. ccar. ccal. ccdp. ccg. ccga. etc. i. e. construitur cum accusativo personae, rei, loci, dativo personae, genitivo, gemino accusativo etc.

## U

**ԱզահուԹիւն**, avaritia.

**Ազուցանեմք, գուցի, գոյց,**  
induo. ccdp. et ar.

**Ազամեան**, adamicus.

**Ազատ, ի, աջ** s. **ից.** liber.  
ccabl.

**ազատեալ.** part. liberatus. servatus. ccabl.

**Ազգ, ի, աւ** s. **ով, աջ, օք.**  
genus. species. gens.  
natio.

**Ազնիւ, նուի, նուայ** s. **նու-**  
**ից.** nobilis. eximius. bonus. pulcher.

**ազնուական, ի, աջ.**  
nobilis.

**Ախոյան, ի, ից** s. **այ.** antesignanus. fortissimus.

**Ախորժելի, լւոյ, լեաց.** jucundus. suavis.

**Ախտ, ի, ից.** passio. affectus. vitium. infirmitas.

**Ածեմք, ածի, ած** s. **էած.**  
duco. porto. ccap. et ի  
cal. **ածեալ** part. ducens.

**Ակն, ական, ալամք, ալունք**  
s. **աչք** q. v. oculus. gemma. fons. origo.

**ալանակիտ,** pellucidus. limpidus.

**Ահ, ի, իւ, ից, իւք.** timor. metus. **զահի հարեալ.** timore percussus.

**ահեղ, ի, ից.** formidabilis. terribilis. vehementissimus.



- Եհա**, ecce. jam. modo.  
ա հ ա ա դ ի կ. ecce. ad  
pers. II. s. loquenti  
proximam refertur.
- Եղադ** modus. ratio. աղա-  
զաւ. postpos. causâ.  
gratiâ. ccg. յաղազաքաե-  
pos. propter. ccg.
- Եղանդ, ոյ, ոց.** secta. hae-  
resis.
- Եղանդեր.** mensa secunda.
- Եղաչեմ, եցի.** oro. rogo.  
peto.
- Եղաւաղեալ,** part. cor-  
rumpens. perdens.
- Եղանի, նւոյ** s. նոյ, նեաց.  
columba.
- Եղբւր, Տ. բերբ, բեր, բերաց.**  
fons.
- Եղեղնաւոր, ի, աց.** sagitta-  
rius. jaculator.
- Եղև, ի, ից.** apparatus.
- Եղբատութիւն.** paupertas.
- Եճեմ, եցի.** cresco. augeor.  
multiplicor.  
աճումն, ճման. incremen-  
tum. augmentum.
- Եմ, ի, աց,** annus. յամս.  
aanis. diebus. tempore.
- Եման, ոյ, ոց, Տ. ի, աց.** vas.  
receptaculum.
- Եմաչեմ, եցի.** pudeflo. eru-  
besco.
- Եմարանոց, ի, աց.** aestiva.
- Եմբառեմ, բարձի, բարձ.**  
ex-tollo. elevo — զձեռն  
ընդդէմ ccg. manum tollo  
contro aliquem. sediti-  
onem moveo.
- Եմբարիշտ, բշտի, տաց.** im-  
pius.
- Եմբարհաւաճութիւն.** fas-  
tus. superbia.
- Եմբիծ, բծի, ծաց** s. ծից.  
immaculatus. innocens.
- Եմբոխ, ի** s. ոյ. ից. turba.  
copia.
- Եմնայն, ի, իւ, այնք, այնց**  
s. այնից, նիւք. adj. om-  
nis ամենայնիւ. omnino.  
prorsus. այսու ամենայ-  
նիւ. his omnibus. per  
haec omnia.
- Եմնայն, subst. in sing.**  
ut praeced. in pl. item,  
sive ամենեքին s. ամե-  
նեքեան, նեցուն s. ցունց,  
նեսին s. նեսեան, նե-  
քումբք. omnis. ամենե-  
լին. omnino. prorsus.  
ամենատարբ, սրբոյ. sanc-  
tissimus.

**Ամէն.** Amen.  
**Ամիճ,** միճոյ, ոց. obsonium.  
**Ամուսին,** սնի s. սնոյ, նաւ  
նաց, նօք. maritus. uxor.  
conjux.  
**ամուսնական,** ի, աջ. nup-  
tialis.  
**ամուսնանամ,** աջայ. ma-  
trimonium in eo. cc. ընդ  
c. dat.  
**ամուսնութիւն.** matrimo-  
nium. conjugium.  
**Ամիողիւմ,** եցի. pass. իմ,  
եցայ. colligo. compre-  
hendo. claudio.  
**Ամութ,** ոյ, ոց. pudor. turpi-  
tudo. ignominia.  
**Այդ,** այդր, այդմ, յայդմա-  
նէ, այդու այդք, այդց.  
sive այդորիկ, այդուիկ,  
այդուքիկ, այդոցիկ, յայդ-  
ցանէ s. յայդոցիկ, այ-  
դուքիւք. iste, a, ud. ad  
personam loquenti  
proximam refertur  
pariter atque se-  
quentia.  
**այդր.** istic. istuc.  
**այդպէս.** adv. istâ ratione.  
ita.  
**այդպիսի.** adj. istiusmodi.  
talis.

**Այժմ.** hoc tempora. nunc.  
**ցայժմ.** huc usque.  
**այժմիկ.** nunc.  
**Այլ,** ոյ, ում, յայլմէ, լով.  
1, adj. alius, a, ud. 2,  
adv. sed. at.  
**այլ և այլ.** s. այլև այլ.  
varius. diversus.  
**Այծեամն,** եման, եմունք,  
եմանց. dorcas. capreolus.  
parva capra.  
**Այն,** այնր, այնմ, յայնմ  
etc. flectitur eâdem  
ratione, quâ այդ. ille,  
a, ud. is, ea, id. de per-  
sona remotiori di-  
citur.  
**յայնժամ.** illo tempore. tunc.  
**այնչափ.** tantopere. tam. —  
մեծ, tantas.  
**այնպէս.** ita. sic.  
**Այո՛.** nae. certe. ita. immo.  
sane.  
**Այպանեմ,** եցի. illudo. deri-  
deo. ccap.  
**Այս,** այսք etc. plane ut  
այդ et այն. hic. haec.  
hoc. ad personam lo-  
quentem refertur.  
**յայսմ չափու.** hoc modo.  
այսու s. այսուիկ. per  
hoc. in hâc. ita.

*այսր. hęc. hęc.*  
*այսինքն. id est. hoc est.*  
nempe. scilicet.  
*այսպէս. hęc modo. hęc ra-*  
tione. ita.  
*այսպիսի. hujusmodi. talis.*  
*այսօր. hodie.*  
**Յայտ** vide sub literâ *յ.*  
**Այլ**, առն, յառնէ, արամբ,  
արք, արանց, արամբք.  
vir. maritus. homo.  
*այրեւձի s. այրուձի. equi-*  
tatus. equites.  
**Անկնկալ.** inexpectatus.  
improvisus.  
**Անահ.** impavidus. intrepidus.  
**Անապական, ի, այ.** incorruptibilis.  
**Անարակ, ի այ.** luxuriosus. illegitimus.  
**Անասուն, սնոյ, ոց.** brutum. animal.  
*անասնական, ի, այ.* irrationalis. bestialis.  
**Անարատ, ի, ից s. ոց.** immaculatus. insons.  
**Անարդ, ի, այ s. ից.** inhonoratus.  
*անարգեմ, եցի.* contemno.  
**Անարժան, ի, ից s. այ.** indignus.

**Անբաւ, ի, ից.** infinitus.  
**Անբիծ** i. q. *ամբիծ.* immaculatus.  
**Անգամ.** 1, subst. vicis.  
*եւթն անգամ* septies.  
2. adv. quoque. etiam.  
**Անգէտ.** inscius. ignarus.  
*յանգէտս,* in ignorantia inscienter.  
**Անգիր.** non scriptus.  
**Անդ** ibi. illic. tum.  
*անդէն.* ibi. statim. illico.  
*անդր.* illuc.  
*անդրէն.* iterum. statim.  
**Անդունդք, դնդոց.** abyssus.  
**Անդրանիկ, նկան s. նկի, կաց.** primogenitus.  
**Անեղ, ի, ից s. այ.** non factus. increatus.  
**Աներեւոյթ, ութի, ից.** invisibilis (quia non aderat lux). non apparens.  
**Աներկիւղ, ի, ից s. այ.** intrepidus.  
**Անզնին.** qui s. quod tangi, sentiri, comprehendi nequit.  
**Անթարշաւ.** non marcescens. marcoris expers.  
**Անիծեալ** part. execratus. maledictus.

Անխմանալի, լռոյ, լեաց qui  
s. quod mente compre-  
hendi non potest.

Անկանիմ, կայ, կիր. cado,  
me conjicio, praecipito.  
ruo. c c. ՚ի վերայ c g.  
super, in aliquem.

անկեալ. part. lapsus. con-  
jectus.

Անկեղծաւոր, ի, այ. non  
simulatus. non fictus.

Անհասողութիւն. natura in-  
comprehensibilis.

Անհաւատալի, լռոյ, լեաց.  
incredibilis.

• Անհնարին. impossibilis. im-  
mensus. eximius.

Անհուն, հի. հից s. հունց.  
infinitus. vastus. im-  
mensus.

Անձն, ին, ամբ, persona.  
ipse. յանձն առնուլ, sus-  
cipere.

անձնեայ, նէի, նէիւ. cor-  
pulentus. permagnus.  
procerus.

Անճառ, ի, իւ. ineffabilis, e.  
անճառելի, լռոյ, լեալ. idem.

Անմահութիւն. immorta-  
litas.

Անյազարար. insatiabiliter.  
auide.

Chrest. armen.

Անշքութիւն. dedecus. vi-  
litas.

Անոյշ, ուշի, ուշիւ. dulcis.  
suavis. jucundus.

անուշութիւն. mollities. sua-  
vitas.

անուշահոտ, ի, իւ, bene  
olens.

անուշահոտեմ, տեցի. bono  
odore impleo.

անուշահոտութիւն. suaveo-  
lencia. fragrantia.

Անորդութիւն. sterilitas.

Անուն, ան, ամբ. nomen.

անուանեմ, եցի. appello. no-  
mino.

անուանի. inclytus. celebris.

Անուր, նրոյ, նրով. vincu-  
lum. collare. յանրոց պա-  
րանոցէն. a vinculis colli.

Անչափ, ի, իւ. immensus.  
infinitus.

Անպատու. indecl. inenar-  
rabilis. անպատմելի, լռոյ,  
լեալ. idem.

Անպատրաստ, ի, իւ. informis.  
rudis. sine ordine.

Անպարտելի, լռոյ, լեալ. in-  
victus. c c abl.

Անջրպետեմ, եցի. separo.  
divido.

f

- Անամ,** սացի. ccdat. obedio. obtempero.  
**Անանելի լայ, լեալ.** intolerabilis, e. quod comprehendendi non potest.  
**Անտառ, ի, ալ.** silva. saltus.  
**Անտեսանելի, լայ, լեալ.** invisibilis.  
**Անտի,** inde. ibi.  
**Անցք, ցից, ցիւք.** pl. tant. eventus. casus.  
**անցանեմ, անցի.** praetereo. transgredior legem. cc շ cinstr. 2, impers. accidit alicui. cc ընդ ca. **անցաւոր, ի, ալ.** praeteriens.  
**Անքննելի, լայ, լեալ.** imperscrutabilis.  
**Անքոյթ.** indecl. tranquilus. sedatus.  
**Աշակերտ, ի, ալ.** discipulus.  
**Աշխատ առնեմ,** molestiam facio, exhibeo. vexo. cc ap.  
**աշխատեցուցանեմ, ցուցի.** adhibeo. cc ap. et c. ՚ի car.  
**Աշխարհ, ի, ալ.** mundus. terra. regio.  
**Աշտարակ, ի, ալ.** turris.  
**Աչք, չաց, չօք.** plur. tant. oculi.  
**Ադա.** postea. tunc. ergo. itaque.  
**ադա թէ.** sin vero. quodsi.  
**Ազականեմ, եցի.** perdo. corumpo.  
**ապականացու, ի, ալ.** corruptibilis.  
**Ապաշխարութիւն.** poenitentia.  
**Ապաքէն.** certo. profecto. **նչ ապաքէն nonne?**  
**Ապրեցուցանեմ, ցուցի.** libero.  
**Առ 1, ad versus.** erga. cca. **առ մի օր.** in unum diem. **բան առ բան.** verbotenus. **առ ՚ի sq.** Inf. ad. c. Gerund. 2) secundum. juxta. ccdat. **առ երի** juxta. prope. cc g. 3, ad. sub. cc instr. **Առ.** cepit. cape. Aor. II. verbi առնուլ.  
**Առակ, ի, ալ.** parabola. similitudo.  
**առակաւոր, ի, ալ.** parabolicus.  
**առակեմ, եցի.** transfero. comparo. cc ՚ի ca parabolice propono.

**Առանց.** sine. ccg.

**Առաջ et Առաջք.** indecl. principium. caput. pars anterior. **յառաջ.** antrorsum. ulterius. antea. prius.

**առաջի.** ante. coram. ccg. **զառաջեալ.** coram. in conspectu. **առաջի եղեալ.** coram positum. propositum.

**առաջին, ջնոյ, ջնով.** primus. primum. **զառաջինն.** primum.

**առաջնորդ, ի, ալ.** primus. dux. princeps. praefectus.

**Առար,** առաւ. Aor. II. pass verbi. **անուլ.**

**Առաւել.** majus. magis. potius. **առաւել ևս.** magis etiam. multo magis.

**առաւելում, ելայ.** augeo. abundo.

**առաւելութիւն.** praecellentia. praestantia.

**Առաքեմ, եցի.** mitto. **առաքեալ, ելոյ, ով.** part. pass. missus. Apostolus.

**Առաքինութիւն.** virtus.

**Անն.** gen. **յառնէ** abl. nom. այր.

**Աննեմ, արարի.** facio. creo. **զատաստան աննել.** iudicium exercere. **ծաղր աննել.** ludibrio habere. **կին** — uxorem ducere.

**Անում, առի, առ** s. **էառ.** capio. **յանձն անուլ.** suscipere in se. accipere. **յինքն** — sibi adsumere. in se suscipere. **ի միտ** — animo infigere, mandare. **վրէժ** — poenas sumere ab aliquo. ccabl. **առեալ** part. capiens. **օն առեալ.** age. agedum.

**Առողջութիւն.** sanitas. integritas.

**Առոյգ, ուզի, ուզաւ.** florens. juvenilis.

**Ասաց,** Aor. I. verbi **ասել.**

**Արեմ, սացի.** dico. **ասացեալ.** part. pass. dictus.

**Աստ,** hic. **հօշ** loco. **աստահօր.** **աստէն.** hic. **հօշ** loco.

**Աստղ, տեզ, տեղք.** stella.

**Աստուած, ւծոյ, ւծով.** Deus verus. **ւածոյ** etc. deus fictus. idolum.

**աստուածաբնակ, ի, ալ.** a Deo habitatus.

ատառածածին, ծնի, ծնիւ.

Deipara. Dei genitrix.

աստուածային, այնոյ, այնով.  
divinus.

աստուածանամ, ծացայ. Dei-  
ficor.

աստուածացեալ. part. Dei-  
ficatus. •

աստուածապէս. tanquam  
Deus. divine.

աստուածասէր, սիրի, սիրաւ.  
Dei amans. pius.

աստուածութիւն. divinitas.

Ատեան, տենի, տենիւ. ju-  
dicium. tribunal.

Ատեմ, եցի. odi. ccap.

ատելի, լւոյ, լեաւ. osor. in-  
visor. part. Fut.

ատելութիւն. odium.

Արձ Imp. verbi առնել.

Արամբ, արամբք. Instr.  
sing. et pl. nom. այր.

Արարի, արար. Aor. II. ա-  
րացէ, արացուք Fut.  
արարաւ. Aor. II. pass.  
verbi առնել.

արարած, ոյ, ով. creatura.  
creatio.

արարեալ part. act. pass.  
faciens. factus, a, um.

արարիչ, ըչի, ըչաւ. conditor.  
creator.

Արբենամ, բեցայ. inebrior.  
արբցէ, արբցուք. Fut. II.

verbi ըմպել.  
Արգելում, գելի. includo.

prohibeo. nego. recuso.  
Արդ. nunc. jam. itaque.

atqui. բայց արդ. jam vero.  
Արդար, ոյ, ով. justus.

արդարացուցանեմ, ցուցի.  
justifico. probo.

Արդեւք s. արդեօք. certo.  
fortasse. in interroga-  
tione an forte?

Արեգակն, կան, կամբ. sol.  
Արև, ու, ու. sol.

արևելք, լից, լիւք. solis or-  
tus. oriens.

արևմուտք, մտից, մտիւք.  
solis occasus. occidens.

Արժան. արժան է. dignum  
est. meretur. convenit.  
interest. ccdp.

արժանի, նւոյ, նեաւ. di-  
gnus.

Արի. արիք. Imp. verbi  
յառնել.

Արիական, ի, աւ. virilis.  
generosus. strenuus.

Արիւն, բեան, բեամբ. san-  
guis. cruor. արեամբ չափ.  
usque ad sanguinem,  
usque ad sanguinis ef-  
fusionem.

Արծաթ, ոյ, ով. argentum.  
արծաթսիրութիւն. argenti,  
pecuniae amor. avaritia.

Արկ s. էարկ III. pers.  
sing. Aor. II. verbi

Արկանեմ, արկի. jacio. con-  
jicio. projicio. pono. ap-  
pono. արկանէր գայր.  
veniebat et conjiciebat.  
ընդ գրով արկանել. con-  
scribere. perscribere.

Արհամարհեմ, եցի. conte-  
mno. despicio.

Արհեստ, i. q. արուեստ ars.

Արձակեմ, եցի. solvo. di-  
mitto. abigo.

Արշակունի, նոյ, նեաց s.  
նոյ, նով. Arsacida. ar-  
sacidicus.

Արու, բուի, բուաց. mas.  
masculus.

Արուեստ, ի, իւ s. աւ, ից  
s. այ. ars.

արուեստական, այ. artifex.  
musicus.

Արտասանեմ, եցի. pronun-  
cio. profero.

Արտաքս. foras. foris. ար-  
տաքս անկաւ. excidit.  
ejectus est.

արտաքոյ. extrinsecus. foris.

extra. ccg. s. c. քան  
sq. acc. praeter.

Արք nom. pl. nominis  
այր vir.

Արքայ, ի, ից. rex.

արքայութիւն. regnum.

արքունի adj. indecl. s.  
նոյ, նեաց. regius.

արքունիք, նեաց. sedes re-  
gia. palatium.

Աւագանի, նոյ, նով s.  
նեաւ, նեօք. proceres.

Աւադիկ. ecce. ad. pers. II.  
referendum.

Աւազան, ի, աւ, այ. baptis-  
terium.

Աւաղեմ, եցի. defleo. lugeo.

Աւանդեմ, եցի. depono. com-  
mendo. trado.

Աւարտեմ, եցի. finio. ter-  
mino. absolvo.

Աւելի, լւոյ, լեաց. prae-  
stans. amplius.

Աւետարան, ի, այ. evange-  
lium.

Աւուր gen. nom. օր dies.

2. Ռ

Ռաբելացի, ցւոյ, լոց. Baby-  
lonius.

Ռազում, բազմի, մաւ, մաց,  
մօք. multus, a, um.



բազմական, ի, այց. sella.  
stratum.

բազմակոյտ, կուտի, ից.  
accumulatus. multus.

բազմահանձար. sapientissi-  
mus.

բազմապատիկ, տկի, տկաց.  
multiplex.

բազմանամ, ացայ. multipli-  
cor.

բազմացեալ, ցելլոյ. part.  
pass. multiplicatus.

բազմացւցանեմ, ցուցի, ցոյց,  
multiplico.

բազմեցուցանեմ, ցուցի, ցոյց.  
reclinare, discumbere  
facio.

բազմութիւն. multitudo.

Բաժանեմ, եցի. divido. dis-  
tribuo. separo. բաժանիմ,  
եցայ. pass. divisor. se-  
paro me.

Բախտ, ի, իւ, ից, իւք,  
fortuna. felicitas.

Բամբասանք, նաց. pl. tant.  
obtrectatio. convicium.

Բայց. sed. verum. extra i. q.  
բաց ccabl. բայց արդ.  
jam vero. բայց եթէ.  
at si. si non. nisi. nisi quod.

Բան, ի, ից. verbum. բան.  
առ. բան. verbotenus.

Բանամ, բացի, բաց s. երաց.  
բացցեմ. aperio. Pass.  
բանամ (Conj. praes.  
բանայցեմ) բացայ. ape-  
rior.

բանալի, լւոյ, լիք, լեաց.  
clavis.

Բանջար, ի, իւ s. աւ etc. s.  
ոյ, ով. herba.

Բառնամ, բարձի, բարձ s.  
երարձ. tollo. porto. com-  
prehendo.

բարք plur. tant. բուց,  
բուք. mores. indoles. na-  
tura. ingenium.

Բարժանեմ i. q. բաժանեմ.

Բարի, բւոյ, բեաց. bonus, a,  
um, pl. բարիք. bona. bo-  
na opera.

բարետեսակ, ի, այց. pulcher.

բարութիւն. bonitas. bonum.

բարւոք. indecl. bonus.  
bonum. bene.

Բարկանամ, ացայ. irascor.  
indignor.

Բարձ s. երարձ Aor. I.  
verbi բառնալ.

Բարձ, ի, ից. pulvinar. gra-  
dus.

բարձրաւանդակ, ի, այց. al-  
tus. sublimis.

Բաց.extra. sine c c abl. բաց.  
'ի բաց. foras. foris. procul.

Բաւական, ի, աւ. sufficiens.

Բերան, ոյ, ուլ, s. ի, աւ.  
os, oris.

Բերդ, ի, իւ, ից, s. աւ, աց.  
arx, arcis.

Բերեմ, բերի, եբեր, բերեալ.  
porto. fero. affero. յայտ  
բերել s. 'ի յայտ բերել.  
manifestare. declarare.  
'ի վերայ բերել. proferre.  
pronunciare.

Բժշկեմ, եցի. medeor. curo.  
sano.

Բժշկութիւն. sanatio.

Բղխեմ, եցի. produco. ger-  
minare facio. fluo.

Բղխումն, խման. scatebra.

Բնակ, ի, աց. proprius.

Բնակարան, ի, աց. habitacu-  
lum.

Բնակեմ, եցի et բնակիմ,  
եցայ. habito.

Բնակեցուցանեմ, ցուցի, ցոյց.  
habitare facio.

Բնակեալ, ելոյ. part. ha-  
bitans.

Բնակիչ, կչի, չաց. habitator.

Բնակութիւն. habitatio.

'ի խնէ abl. vocis բուն.

Բնութիւն. natura.

Բոլոր, ի, իւ s. ուլ, ից, իւք.  
totus. universus.

Բողոքեմ, եցի. clamo. ad  
aliquem c c. առ cap.

Բովանդակ. omnis. totus.  
integer.

Բորոտ, ի, ից s. աց lepro-  
sus.

Բոցեղէն, ղնի, նաց. flam-  
meus.

Բուն. naturalis. genuinus.

'ի բնէ s. 'ի բնէ ժամանա-  
կաց. ab origine tempo-  
rum. jamdudum. anti-  
quitus.

Բուռն. fortis. violentus.

Բուսանիմ, սայ, սեալ. pul-  
lulo. germino.

Բուսուցանեմ, սուցի. ger-  
minare facio. produco.

Բուրեմ, եցի. odorem edo,  
spargo.

Բռնանամ, ացայ. tyrannidem  
excerceo. imperium usur-  
po.

Բռնաւորութիւն. dominium.  
tyrannis.

Բռնութիւն. violentia.

Գ

Գազան, ի, աց. fera. bestia.

Գազանաբարոյ, ի, ից. ferus.  
saevus.

**Գալստ, լստեան.** adventus.  
**Գամ, եկի, եկն, եկ, եկեալ,**  
**եկից, եկեսցես** etc.  
 venio ad al. cc 'ի ca.  
**գալ զկնի** sq. gen. sequi.  
**Գանձ, ու, ուց, ս. ի, ից.**  
 thesaurus.  
**Գարշապար, ի, սց.** calx.  
 planta pedis.  
**Գաւառ, ի, սց.** regio. pro-  
 vincia.  
**Գեհեն, ի** s. ոյ, իւ. Ge-  
 henna.  
**Գեղ, ոյ, ոց.** pulchritudo.  
**գեղապատշաճ.** bene dispo-  
 situs. bene formatus.  
 formosus.  
**գեղեցիկ, ցկի, կաց.** pul-  
 cher.  
**գեղեցկութիւն.** pulchritudo.  
**Գետ, ոյ, ով, ս. ի, աւ.** flu-  
 men. fluvius.  
**Գեր 'ի վերոյ.** supra. prae.  
 postpos. ccg.  
**գերազանցութիւն.** excellen-  
 tia. praecellentia.  
**գերափոխեմ, եցի.** transfero.  
 muto.  
**Գերեալ** part. act. et  
 pass. capiens. captus.  
 captivus.  
**գերութիւն.** captivitas. cap-

tivorum turba s. ag-  
 men. captivi.  
**Գին, զնոյ, ով, et ի, ից.**  
 pretium.  
**Գինի, նւոյ, նեաց.** vinum.  
**գինին եկն զակամբ նորա.**  
 vinum tentavit caput ejus.  
**Գիշեր, ի, սց, ս. ոյ. nox. 'ի**  
**գիշերի.** noctu.  
**Գիտեմ, տացի, տացեալ.**  
 scio. cognovi. **գիտասցիք**  
 scias. scito. **գիտասցիք**  
 scitote. **գիտելի է.** scien-  
 dum est. scire oportet.  
**գիտութիւն.** scientia. co-  
 gnitio.  
**Գիր, գրոյ, ով, ս. գիրք,**  
**գրոց, ովք.** liber. scrip-  
 tum. **ընդ գրով արկա-**  
**նել.** conscribere. per-  
 scribere. pl. **գիրք, գիրս,**  
 s. **գրեան.** libri.  
**Գիւղ, դեղջ, ջէ** s. **ղէ, զիւ,**  
**ղնց, զիւք** s. **ղօք.** vicus.  
 pagus.  
**Գլորեալ** lapsus. part.  
**Գլուխ, գլխոյ, ոց.** caput.  
**գլխաւոր, ի, սց.** capitalis.  
**Գնամ, գնացի, գնաց, գնա՛,**  
**գնացից, գնացես.** eo.  
 proficiscor.

գնացեալ part. profectus.

գնաց s. գնացք, ցից, ցիւք.  
via. cursus aquae.

Գնեմ, եցի. emo. գնոց  
գնեալ. pretio emtus.

Գնոց gen. pl. nom. գին.

Գողանամ, ղացայ. furor. fur-  
tum facio.

Գում, գոս, գոյ, գոյր, գուցէ,  
գոլ, գոլով. existo. sum.

գուցէ. fiat. fortasse.

գոյ, է, էց. ens. substantia.

գոյիւ իւրով. in univer-  
sum. prorsus.

գոյացութիւն. essentia. exis-  
tentia. substantia.

Գոչումն. clamor. vox.

Գովեմ, եցի. laudo.

Գործ, ոյ, ոց. opus. nego-  
tium. labor.

գործակալութիւն. praefec-  
tura. munus.

գործաւոր, է, աց. operarius.

գործեմ, եցի. facio. operor.  
laboro. colo terram.

Գումարեալ. part. congre-  
gans. colligens.

Գուռակ, է, աց. vates. pro-  
pheta.

Գուսան, է, աց. cantor. can-  
tatrix.

Chrest. armen.

Գտանեմ, գտի, եգիտ, գտեալ.

invenio. reperio. pass.  
գտանիմ, գտայ, գտաւ.

Գրաւեմ, եցի, եաց. arripio.

Գրգռեմ, եցի. provoco. ex-  
cito.

Գրեմ, եցի. scribo.

Գրոյ, Գրոց, Գրով, gen.  
sing., plur., instr: sg.  
nom. Գիր.

Ս. Գ

Գ Affixum personae  
secundae.

Դա, դորա, դմա, 'ի դմանէ,  
դովաւ, դոքա, դոցա,  
դոքօք. iste. pron. dem.  
ad pers. II. referen-  
dum.

Դադարեմ, եցի et դադա-  
րիմ, եցայ. cesso. resto.  
դադարեալ. part. restans.  
remanens.

Դալար, է s. ոյ, viridis. re-  
cens.

Դահանակ. sapphirus. sma-  
ragdus. sardonyx.

Դանակ, է, աց. culter. cul-  
tellus.

Դաշն, շնն, շանց. pactum.  
foedua.

Դաշտ, ի, աց. planities.  
campus.

դաշտավայր, ի, աց. planities.

Դառնամ, դարձայ, դար-  
ձայց, դարձիս. redeo.  
revertor. դառնալ յետս.  
retro verti.

դարձեալ. part. reversus.  
iterum.

